ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» ----------2023թ. **N ------- -Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԳՈՒՅՔ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան համայնքի սեփականություն համարվող սույն որոշման հավելվածում նշված երաժշտական գործիքները, ընդհանուր 7701.0 հազ. (յոթ միլիոն յոթ հարյուր մեկ հազար) ՀՀ դրամ հաշվեկշռային արժեքով, նվիրաբերել Արցախի Հանրապետությանը՝ ի դեմս Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, Արցախի Հանրապետության երաժշտական և արվեստի դպրոցներում օգտագործելու նպատակով:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ կնքել նվիրաբերության պայմանագիր:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
Երևան քաղաքի ավագանու
2023 թվականի _____ _____ի
N _____ Ա որոշման

ՑԱՆԿ
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԱԲԵՐՎՈՂ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ

N	*Երաժշտական գործիքը*	*Արժեքը (ՀՀ դրամ)*	*հատ*	*Ընդամենը (ՀՀ դրամ)*
1	**Ջութակ 1/4**	59000	3	177000
2	**Ջութակ 2/4**	57000	4	228000
3	**Ջութակ 3/4**	62500	4	250000
4	**Ջութակ 4/4**	69000	4	276000
5	**Թավջութակ 3/4**	345000	1	345000
6	**Կլարնետ**	495000	3	1485000
7	**Շեփոր**	165000	2	330000
8	**Քանոն**	279000	4	1116000
9	**Սաքսոֆոն տենոր**	395000	1	395000
10	**Թառ**	190000	2	380000
11	**Սանթուր**	300000	1	300000
12	**Քամանչա**	175000	2	350000
13	**Դհոլ**	50000	5	250000
14	**Կիթառ**	42900	10	429000
15	**Ակորդեոն**	695000	2	1390000
Ընդամենը			**48**	**7701000**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԳՈՒՅՔ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ
ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Որոշման ընդունումը պայմանավորված է Արցախի Հանրապետության մշակութային կազմակերպությունների, մասնավորապես՝ երաժշտական և արվեստի դպրոցների բնականոն գործունեության ապահովման, դպրոցների նյութատեխնիկական բազայի արդիականացման, Արցախի Հանրապետությունում գեղարվեստական կրթության որակի բարելավման, օժտված և տաղանդավոր, ինչպես նաև սոցիալապես անապահով արցախցի երեխաների համար արտադպրոցական ուսման նպաստավոր պայմանների ապահովման անհրաժեշտությունից ելնելով: Որոշման ընդունմամբ հնարավորություն կընձեռվի Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող, Երևան քաղաքի 2022 թվականի բյուջեի «Գույքի ձեռքբերում և նվիրատվություն Արցախի մշակութային կազմակերպություններին» ծրագրի շրջանակում ձեռք բերված 15 անուն 48 հատ երաժշտական գործիքները նվիրաբերել Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության մշակութային կրթության հաստատություններին, այդ թվում՝ Արցախյան պատերազմի հետևանքով ներկայում Ստեփանակերտ քաղաքում տեղակայված Հադրութ և Շուշի քաղաքների արտադպրոցական դաստիարակության հաստատություններին: Նվիրաբերվող գույքը էականորեն կբարելավի նշված հաստատություններում իրականացվող կրթադաստիարակչական գործընթացի որակը, կմեծացնի դրանց գրավչությունն ու կնպաստի Արցախի Հանրապետությունում մշակութային կրթության ոլորտի զարգացմանը:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է ընդունել «Գույք նվիրաբերելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

1/31/2023

X

ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Signed by: SARGSYAN HRACHYA 2302850092 **ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԳՈՒՅՔ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Գույք նվիրաբերելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԳՈՒՅՔ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Գույք նվիրաբերելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

1/31/2023

X

ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Signed by: SARGSYAN HRACHYA 2302850092 **ՀՐ. ՍԱՐԳՍՅԱՆ**